Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Երևանի Հ 84 Մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Հասմիկ Առուշանյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Բովանդակություն

1.Ներածություն……..…3

Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

2.Ծես, ծիսակարգ, սովորույթ……4

3.Ազգային ծեսերի առանձնահատկությունները……...7

4.Ազգային ծեսերի վերականգնման դրական կողմերը……....9

5.Հայ ազգային տոներ և ծեսեր……10

6.Թթուդրիկ……...10

7.Սուրբ Ծնունդ և Ամանոր……11

8.Ղափամայի ծես……12

9.Տեառնընդառաջ……13

10. Ծառզարդար-Զատիկ……....14

11.Վարդավառ ……16

12.Եզրակացություն……17

13.Գրականության ցանկ……17

Ներածություն

Այն ունի ներածական մաս, երկու գլուխ և եզրակացություն: Առաջին գլխում անդրադարձել եմ ծեսերին՝ ի՞նչ է իրենից ներկայացնում ծեսը, ինչպե՞ս ենք այն իրականացնում, ի՞նչ կարող ենք սովորել ծեսի միջոցով և այն փոխանցել երեխաներին: Մանրամասն ներկայացրել եմ ծեսերի իմաստը, դերն և նշանակությունը:
Երկրորդ գլխում ներկայացրել եմ ծեսերի գործնական մասը: Նպատակն այն է, որ երեխաների մոտ զարգանա սեր դեպի բնությունը: Երեխաները ծանոթացան ազգային ծիսական տիկնիկների հերոսներին, ինչպես նաև իրենց մասնակցությունն ունեցան կերպարները կերտելու գործում: Ծեսերի իրագործման գլխավոր նպատակներից մեկն էլ այն է, որ ազգային մշակույթի արժեքները չմոռացվեն: Այս դեպքում երեխան հանդիսանում է ծեսը պահպանողն և փոխանցողը դեպի տուն և շրջակա աշխարհ:

Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Ծես, Ծիսակարգ, Սովորույթ

Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներն ու հանգամանքները: Դրանցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը: Ծես նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, ազգությանը, պետությանը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և դարեդար են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել էթնոսին բնորոշ առանձնահատկությունները:
Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը կյանքի և գործունեության կարևոր պահերին: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, մարդկային հարաբերություններում և այլուր: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունն ու հարատևությունը:

Մշակույթի ժառանգականության փոխանցման մյուս ավանդական ձևը սովորույթն է: Սովորույթը վարքի կարծրատիպացված միջոցն է, որը վերարտադրվում է որոշակի հասարակությունում կամ սոցիալական խմբում և սովորական է նրա անդամների համար: Սովորույթները կենցաղի պահպանված սովորական մասն են, ծեսերի և ծիսակարգերի բեկորները, որոնք կորցրել են իրենց առաջնային նշանակությունը, բայց պահպանել են մարդկանց միավորելու գործառույթն ամենօրյա ընդունված նորմերով: Սովորույթը նաև կենցաղում վարքի կարգավորիչ է, որը աստիճանաբար դարձել է ավանդույթ:

Երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ավանդույթների, ծեսերի, տոների տեսքով նաև: Բնականոն կյանքով ապրելու պայմաններում ժողովրդական տոները չէին իմաստազրկվի, այլ նոր որակ, նոր ձև կստանային և կշարունակեին կատարել իրենց կարևորագույն դերը՝ մարդկանց համախմբելու, ազգային և մարդկային արժեքները պահպանելու կարևորագույն գործառույթով: Երեխան դաստիարակվում և սովորում է՝ յուրացնելով մեծերի փոխանցած մշակույթը: Եթե ընտանիքում չի պահպանվում ավանդականը, ապա այդ գործն իր վրա է վերցնում պետությունը կամ կրթօջախը՝ սկսելով մանկապարտեզից և շարունակելով մինչև դպրոցն ավարտելը:
Ծեսերին նոր կյանք տալու համար հարկավոր է նախ շատ լավ յուրացնել ավանդականը, ճանաչել այն միջավայրը, որտեղ ստեղծվել են դրանք: Լավ իմանալ երգերն ու պարերը, ծիսական գործողությունները, պարագաները, դրանց խորհուրդն ու պատրաստման տեխնոլոգիան: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը: Երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրող ու ակտիվ փոխանցող:
… Ամենամեծ ու ամենացանկալի նորամուծությունը կրթության ասպարեզում այսօր այն կլինի, որ ինչ-ինչ պատճառներով իր արմատներից հեռացած ժողովրդին վերադարձվի իր իսկ ստեղծածը: Հայ

մեծագույն մանկավարժները ամենամեծ դպրոցը համարել են ժողովրդական դպրոցը և իրենց ստեղծած կրթական համակարգը փորձել են մոտեցնել ժողովրդական դպրոցին, որովհետև վերջինս առավելագույն արդյունքներին հասել է բնության թելադրած պարզագույն միջոցներով»: (Արթուր Շահնազարյան):

Ազգային ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթը յուրացրած, ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Այն մանկան ընդհանուր զարգացման գործընթաց է: Ամեն տարիք իր չափով է ներառվում այդ գործընթացին, խաղում իր տարիքին բնորոշ հմտությամբ: Զարգանում է իրավիճակն ըմբռնելու կարողությունը, մտքի ճկունությունը, երևակայությունը, հիշողությունը, ուշադրությունը, կամքը, մկանների լարումը, ինքնուրույն աշխատելու, վերլուծելու, համադրելու, շոշափելու, ուսումնասիրելու, իր դիտողությունները հաղորդելու կարողությունը, երևույթների մեջ կապ գտնելու, ճիշտ կողմնորոշվելու, շարժումներին տիրապետելու կարողությունը, հարստացնում է բառապաշարը և այլն: Ազգային ծեսերի խաղարկման մեջ մանուկը հիմնականում կարող է ընդգրկվել իր տարիքին համապատասխան ծիսական գործողություններ կատարելով, ծիսական և մանկական խաղեր խաղալով:

Արգացման համար ստեղծում է պարարտ հող՝ մի շարք խնդիրների լուծման համար: Ծեսն ամբողջությամբ իմանալու, ըմբռնելու և իրենը դարձնելու համար հարկավոր է անպայման մասնակից լինել, ներառվել նախապատրաստման գործընթացին, ծիսական միջավայրի ստեղծմանը, միասին պատրաստել ծիսական պարագաներ, ծիսական կերակուրներ, սովորել ծիսական ազգային երգեր, պարեր, ծեսի խաղարկման ընթացքում իմանալ իր դերը, գործողությունների այն բաժինը, որն իրենն է: Իսկ մեծերն էլ պետք է իմանան, որ այդ ամենը հավասարապես հարկավոր է բոլորին, ըստ այդմ էլ՝ բոլորը հավասար մասնակից են՝ իրենց կարողությունների սահմաններում: Այս դեպքում մանուկը, ինչպես նաև մեծը, կլինի ծեսն իմացող, կրող, փոխանցող: Շատ կարևոր է այս ամենը ներմուծել ընտանեկան միջավայր, որտեղ սիրելի, հարազատ մարդկանց հետ մանուկը ավելի վստահ, համարձակ ու ազատ կգործի՝ ժառանգելով ամենակարևորը՝ ազգային մշակութային արժեքները:

Ազգային ծեսերի առանձնահատկությունները

Մշակույթի փոխանցման ձևերի մեջ կարևոր դեր ունեն ծեսերը: Ծեսը ներառում է վարքի այն ձևերը, որոնք իրենց էությամբ նշանային են, խորհրդանշական և չունեն նպատակային, գործնական բնույթ: Մարդաբան Մ. Դուգլեսը ծեսը սահմանում է որպես գործողությունների տիպեր, որոնք ծառայում են հավատքի արտահայտման համար, կամ էլ որոշակի խորհրդանշական համակարգերին պատկանելու ձևեր են: «Ծես» հասկացության տակ սովորաբար ենթադրվում է ստանդարտ, հաստատուն գործունեության հետևողականությունը, որն ունի արարողական բնույթ:
Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ըստ Ա. Սարգսյանի՝ «Ծիսակարգը խիստ կանոնակարգված է, անփոփոխ, միակերպ և հիմնականում կապվում է կրոնական պատկերացումների հետ, ունի զանգվածային բնույթ, այսինքն՝ դրան մասնակցում են մարդկանց մեծ խմբեր»:
Աշխարհում շատ ու շատ ժողովուրդներ կրոնական, քաղաքական, գաղափարախոսական համակարգերի փոփոխություններից հետո իրենց ծեսերը, այնուամենայնիվ, շարունակում են կատարել: Ժողովրդական ծեսը ծրագրված երևույթ չէ, այն ժողովրդի հավաքական և տևական ստեղծագործության արդյունք է, անընդհատ փոփոխությունների ենթակա, բայց միաժամանակ հիմնական բաղադրիչներով խիստ պաղպանողական: Հայկական ծեսերը շատ հարուստ երգեր ու պարեր ունեն: Երգերի բովանդակությունը միշտ համապատասխանում է տվյալ ծեսի իմաստին, իսկ ծեսերին բնորոշ ուտելիքները, խնջույքները, տոնական հագուստը, նվերները ունեն իրենց առանձնահատկությունները: Դրանք բոլոր տոներում են առկա: Խնջույքները չեն կազմակերպվում ուտել- խմելու համար, յուրաքանչյուր

ծեսին կազմակերպվող խնջույք պետք է համապատասխանի տվյալ ծեսի իմաստին, ըստ որի համապատասխանեցման համար էլ ընտրվում է ծեսը կազմակերպելու վայրը, ժամը, մասնակիցները, ուտեստների տեսակները: Այսպիսով, հանդես գալով որպես հասարակական կյանքի հոգևոր ոլորտի խտացումներ՝ ծեսերը, սովորույթները անգնահատելի դեր ունեն՝ յուրովի լրացնելով ավանդույթի ընդհանուր կառույցի առանձին կողմերը, որի շնորհիվ ավանդույթը դառնում է միասնական և ներդաշնակ մի ամբողջություն: Դրանցում ժողովուրդը հանդես է գալիս և՛ որպես ստեղծագործ, և՛ որպես գործիչ, և՛ որպես քննադատ: Ծեսի մեջ ներառված տարրերից անփոփոխ է միայն բուն խորհրդաբանական շերտը: Հեշտ է ենթադրել, որ ազգերի, մարդկության «կյանքի» ընթացքում որոշ ծեսեր մոռացվում են, նորերն են ստեղծվում, եղածները փոփոխվում են՝ անպայման ազդվելով ժամանակաշրջանի կենսափիլիոփայությունից, սոցիալական իրավիճակից, հավատալիքներից, սովորույթներից: Հետևապես՝ ծեսը ժամանակի կրողն է ու ինչ-որ տեղ մարդու գործունեությունը կարգավորող ֆունկցիա ունի: Եթե ամեն սերունդ ծեսին իր կյանքից մի բան չավելացնի, այն աստիճանաբար կմարի: Իհարկե, ծեսին նոր կյանք տալ՝ չի նշանակում ակունքից այնքան հեռանալ, որ այն դառնա ոչ թե ծես, այլ անհատ մարդկանց երևակայությամբ ստեղծված հնի ու նորի վատ սինթեզ: Ծիսական հիմնական կարգը պետք չէ շփոթել տոնական մասի հետ: Յուրաքանչյուր ծես, ծիսական գործողություններից բացի, ունի տոնական մաս, որտեղ կարելի է կատարել ժամանակակից բարձրարժեք երգեր ու պարեր: Նախագծի նպատակն է ծեսը, տոնը դարձնել երեխայինը, որն էլ կլինի ոչ միայն մասնակից, այլև փոխանցող: Երեխան, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում է ծեսը: Ուսումնական հաստատություններում, ինչպես և իրական կյանքում, ծիսական գործունեությունը որոշակի փուլեր է ենթադրում ՝

. ծեսի նախապատրաստում

. ծիսակատարություն

Ծիսակատարությունը ծեսի նախապատրաստական փուլում սովորողների գործունեության, դրա արդյունքների ամփոփումն է: Ծեսերը բեմականացումներ չեն և երեխաները իրենք են ստեղծում և՝ իմաստավորում, խաղում, երգում այդ տոները:

Ազգային ծեսերի վերականգնման դրական կողմերը

Ազգային ծեսերի վերականգնումը և հանրակրթության մաս դարձնելը ունի մի շարք դրական կողմեր՝

- Սովորողը ծանոթանում է ազգային տոներին, անցկացման կարգին, ծիսական առօրյային
- Սովորում է ծիսական երգերը, խաղերը, խաղերգերն ու ասիկները
- Սովորողը երգի միջոցով հաղթահարում է բարբառային դժվարությունները
- Արդյունքում վերականգվում է տոնը իր ամբողջ ծիսակարգով

Հայոց ազգային տոները տարբեր ժամանակներում տարբեր դրսևորումներ և վերաիմաստավորումներ են ունեցել: Սակայն այս տոների արմատներն այնքան խորն են եղել ժողովրդի ինքնագիտակցության մեջ, որ ժամանակի կրոնաքաղաքական փոփոխությունները նույնպես չեն կարողացել ազդել դրանց վրա: Հայկական մշակույթը հնուց ի վեր, մինչ օրս էլ, աչքի է ընկնում իր բազմաթիվ և յուրօրինակ ազգային տոներով: Մենք բոլորս այս տոները նշում ենք, որպես քրիստոնեական և եկեղեցական տոներ, սակայն այս տոների մեծ մասը գալիս է դեռևս նախաքրիստոնեական ժամանակներից:
Ծեսերն ու տոներն այսօր մենք իրականացնում ենք որպես գործունեության ձև, որով երեխան ապրում է՝ խաղում է, երգում, պարում, ընկալում ու ճանաչում: Մանկապարտեզում երեխան ծեսն ու տոնը ընկալում է իր երգած երգի, իր պարած պարի, իր ձեռքով պատրաստած ծիսական ուտելիքի, իրի, իր խաղացած խաղի կերպով: Այստեղ ծեսը՝ որպես ինտեգրված թեմատիկ միավոր, վաղուց ի վեր դարձել է կրթության կարևոր բաղկացուցիչ մաս՝ ներառելով

ամենատարբեր հմտությունների ու կարողությունների՝ առերևույթ միգուցե չերևացող, բայց իրականում շատ խորքային հիմք։ Մանկապարտեզում իրականացվող ծեսերը պայմանականորեն կարող ենք բաժանել երկու մեծ խմբի՝ հայ ավանդական և սովորույթներ, որոնք վերափոխվել, վերածվել են յուրատեսակ սովորույթ-ծեսերի։ Սովորույթը շատ ավելի կապված է առօրյա կյանքի հետ, քան արարողությունն ու ծեսը։ Ինչպես ծեսն ու ծիսակատարությունը, կորցնելով իրենց իմաստը, կարող են դառնալ սովորույթ, այնպես էլ այս դեպքում սովորույթը կարող է վերափոխվել ծիսակատարության ու ծեսի։

Հայ ազգային տոներ և ծեսեր

Հ 84 Մանկապարտեզում իրականացվում են բազմաթիվ տոներ և ծեսեր;

Դրանք են՝ Թթուդրիկ, Նոր տարի, Ղափամայի ծես, Բարեկենդան, Տեառնընդառաջ,Ծառզարդար-Զատիկ,Վարդավառ; Մանկապարտեզում թթուդրիկն ամենամյա ավանդական ծես է, որը խորհրդանշական է։

Թթուդրիկ

Ամեն մեկը բանջարեղեն է բերում՝ կաղամբ, լոլիկ, վարունգ, գազար, ծաղկակաղամբ, սխտոր, կանաչի և այլն: Լվանում ենք միասին, համտեսում, կտրատում, սաները կարողանում են թե՛ ինքուրույն լվանալ, թե՛ կտրատել, սիրուն դասավորում ենք տարաների մեջ: Բանջարեղեններից պատրաստում ենք թթու-կերպարներ, թթու-դեմքեր: Պատրաստում ենք աղաջուր, կատարում ենք բնագիտական փորձ և սպասում թթվելուն, որ հետո համտեսենք: Ծեսի ժամանակ գուշակում ենք հանելուկներ,երգում,պարում,ուրախանում:

Սուրբ Ծնունդ և Ամանոր

Սուրբ Ծննդյան ծեսը սկսում ենք երգեր ու պարեր սովորելով: Միասին սովորում ենք ավանդական, ծիսական երգեր, պարերգեր ծանոթանալով ամեն մի երգի, պարի պատմությանը; Նոր տարին գեղեցիկ ու երկար սպասած տոն է՝ հատկապես մանուկների համար:

Զարդարում ենք ծիսական ծառը և սեղանը, երգում, բարեմաղթանքներ հղում միմյանց: Կտրում ենք նախօրոք միասին թխած տարեգաթան ու որոշում այդ տարվա հաջողակին: Խաղում ենք ընկուզախաղեր՝ պտտում, հարվածում, գլորում, դե վերջում էլ՝ կոտրում ու համտեսում: Այս ողջ գործունեությունը սաների մոտ ձևավորում, ապա և զարգացնում է տարատեսակ կարողություններ ու հմտություններ, ինչպես նաև բացում գիտելիքի շտեմարանի այս դուռը դեպի հայ ավանդական ամանորյա սովորույթների ու ավանդույթների ակունքները:

Երգեցինք ամանորյա ավետիսներ, պարեցինք ազգային պարերգեր, երեխաների հետ ընկուզախաղեր կազմակերպեցինք: Ամանորյա ծեսը մեզ մեծ պատկերացում տվեց իրական հայկական ազգային ամանորի մասին իր խոհանոցով և ուրախ տրամադրությունը՝ երգ ու պարով:

Երեխաները ծանոթանալով ամանորյա ազգային ծեսին՝ իրենց բառապաշարը հարստացնում են ծիսական նոր բառերի իմացությամբ:

Երեխաների ամենասիրված և սպասված հյուրերը՝ Ձմեռ պապն ու Ձյունանուշն էին: Նրանց մեծ ուրախությամբ դիմավորեցինք և ապահովեցինք ամանորյա բարձր տրամադրությունը: Միջոցառման ժամանակ երեխաները ստացան գեղեցիկ նվերներ:

Ղափամայի ծես

Այս ծեսը հատկապես սիրելի է սաների համար, քանի որ շատ «քաղցրահամ ու մեղրանուշ» ծես է: Ամեն մեկն իր հետ բերում է փոքրիկ դդում, ծանոթանում ենք, իմանում, թե ինչ է դդումը, ինչ գույն ունի, ինչ ձև ունի, ինչ համ ու հոտ: Դդմի գլուխը կտրում ու հանում ենք կափարիչի նման, փորում ենք, միջուկը հանում, մեջը լցնում բրինձ, չամիչ, չիր, մեղր, կարագ, համեմունքներ ու դնում ջեռոցը՝ այս կարևոր իրադարձությունը համեմելով ուրախ ծիսերգերով: Արդյունքում՝ մի սիրուն, շքեղ, փայլուն ու համող ղափամա: Այս տարբեր աշխատանքների միջոցով սանի մոտ զարգացնում ենք նախ զգայարանները, կարողանում է համտեսել, իմանալ՝ ինչ համ ունի, ճանաչում է գույնը, ձևը, չափը, կառուցվածքը և այլն: Սանը կերպարվեստային աշխատանք է կարողանում կատարել, ինքնուրույն կտրել,փակցնել, սոսնձել. զարգանում է մանր մոտորիկան:

Տեառնընդառաջ

Նախապատրաստվում ենք Տեառնընդառաջի ծեսին: Պատրաստում ենք փոխինդե գնդիկներ, հալվա, տանը մայրիկների օգնությամբ գաթաներ ենք թխում, որպեսզի ծեսի ժամանակ հյուրասիրենք մեր իսկ պատրաստած աղանդերը: Սկսում ենք Տեառնընդառաջի սեղանը զարդարելու արարողությունը:

Այգեպանի հետ հավաքում և դասավորում ենք փայտերը, որպեսզի միասին վառենք խարույկը: Մեծ շրջան ենք կազմում, վառում կրակը, և սկսում Տեառնընդառաջի՝ գարնանամուտն ազդարարող տոնակատարությունը:

Ծառզարդար-Զատիկ

Ծաղկազարդը նախորդում է Զատկին, որի ընթացքում սկսում ենք պատրաստվել ծեսին, դիմավորել Ուտիսին ու Ակլատիզին։ Զատիկը ունի իր ծիսական ծառը, տիկնիկները և ծիսական զանազան խաղերը։

Ծառը խորհրդանշում է անցյալը, ներկան, ապագան։ Ծեսի ընթացքում միասին գունավորում ենք ձվեր և թելերով կախում ծառի ճյուղերից։ Ձվերը խորհրդանշում են աշխարհը։ Այս ծեսը մի քիչ նաև կերպարվեստային կարող ենք որակել։ Սկսում ենք

միասին պատրաստել զատկե ձվիկներ։ Խառնում ենք մեզ մոտ եղած բոլոր գույներն ու ներկերը։ Խառնաշփոթը պատրաստ է։ Գույնե՜ր-գույնե՜ր. . . Բոլորով սկսում ենք զարդարել ներկերի տարատեսակ երանգներով։ Արդյունքում՝ բազմապիսի զատկե ձվիկներ։ Սկսում ենք ցորենացանը, սաները բերում են բամբակ և ցորեն, ափսե ու ջուր։ Սկզբից բամբակն ենք հարթ փակցնում տարայի վրա, հետո մի քիչ ջուր ենք ցողում, որ խոնավանա բամբակը, ապա լցնում ենք ցորենը, կարելի է նաև ոսպ ցանել, քանի որ ոսպից դուրս եկածը նույնպես գեղեցիկ է, հետաքրքիր կառուցվածք ունի։ Ցանում ենք ցորենը՝ անհամբեր սպասելով ածիկի աճելուն։ Միասին բոլոր խմբերով երգում ենք, խաղում, պարում, ձու գլորում, փետուր նետում, տարատեսակ ծիսական խաղեր խաղում՝ ձուկռվոցի, ձուպտտոցի, ձուգլորոցի։

Վարդավառ

Հնում մարդիկ այնքան էին հավատում ծեսերի զորությանը, որ հնարել էին Անձրևաբեր և Անձրևախափան ծեսեր՝ դրանց միջոցով

կարգավորելու բնության երևույթները: Հայտնի են շատ ծիսական երգեր ու խաղեր՝ կապված տարբեր ծեսերի հետ: Հայոց ավանդական տոնակարգում Վարդավառը ամենամեծ ամառային տոնն է: Տոնը սկսվում է առավոտյան: Բոլորով իրար վրա ջուր ենք լցնում՝ հաշվի չառնելով տարիքը, սեռը: Ոչ ոք չպիտի նեղանա, քանի որ այդ օրը ջուրն ունի այսպես ասած բուժիչ ուժ: Այս ծեսի միջոցով ծանոթանում ենք ազգային ավանդույթներին ու սովորույթներին՝ դառնալով դրանց կրողն ու փոխանցողը: Պատրաստած ծիսական պարագաներով, ժողովրդական, ազգային ծիսական խաղերով դառնում ենք ակտիվ մասնակից, փոխանցող, տարածող:

Եզրակացություն

Այսպիսով՝ ծեսը ավանդական կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է, որին հավատացյալները վերագրում են մոգական, խորհրդավոր հատկություններ։ Ծագել է հնագույն ժամանակներում և դարձել պաշտամունքային արարողությունների անբաժան մաս։ Այն ուղեկցվում է աղոթքներով, խմբերգերով, երաժշտությամբ։ Ծեսերը արտահայտում են որոշակի հասարակական հարաբերություններ, ուստի ժամանակի ընթացքում փոփոխվում, վերամշակվում և հարմարեցվում են իրադրության պահանջներին։ Հայ ժողովրդական ծիսական համակարգի ավանդական ծեսերն իրենց բացառիկ կարևոր տեղն ու դերն ունեն, քանի որ նրանց ակունքների վրա է հիմնվում, ապա և կառուցվում բարձրարժեք կրթությունը։ Մի շարք ծեսերի ու սովորույթ դարձած ծեսերի միջոցով զարգանում է սանի ստեղծագործելու ունակությունը, երևակայությունը, ուշադրությունը, հիշողությունը, շարժունակությունը, վարքը, ակտիվությունը, անկաշկանդվածությունը, ինքնուրույնությունը, ճանաչողությունը և մի շարք այլ հմտություններ ու կարողություններ։

Գրականության ցանկ

- Ионин Л. Г. Социология культуры, М., 2004, с. 166

- Խառատյան-Առաքելյան Հ., Հայ ժողովրդական տոներ, Ե., 2005, էջ 321:
- Մկրտչյան Ս., Տոներ. Հայկական ժողովրդական ծեսեր, սովորույթներ, հավա-տալիքներ (ավանդույթ և արդիականություն), Ե., 2010, էջ 101:
- Նահապետյան Ռ., Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Ե.,2004
- Քաջբերունի, Հայկական սովորույթներ [Ազգագրական հանդես (այսուհետև՝ ԱՀ), գ. 7-8, Թ., 1901, էջ 168]: